«ՎԻԿԱՐՏ» ՍՊԸ կողմից Կապանի ավազակոպճագլաքարային խառնուրդի հանքավայրի շահագործման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ 4-րդ փուլի հանրային քննարկման

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

18.02.2020թ. **ք. Կապան**

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի /21.06.2014թ. ՀՕ-110-Ն/ և ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով՝ Կապանի համայնքապետարանի նիստերի դահլիճում 2020 թվականի փետրվարի 17-ին, ժամը 14:00-ին տեղի ունեցավ «Վիկարտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Կապանի ավազակոպճագլաքարային խառնուրդի հանքավայրի շահագործման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ 4-րդ հանրային քննարկումը:

Քննարկմանը ներկա էին «Վիկարտ» ՍՊԸ-ի, Կապանի համայնքապետարանի աշխատակիցներ և համայնքի բնակիչներ:

Հանրային քննարկման մասնակիցների անհատական կազմը կցվում է սույն արձանագրությանը:

Հանրային քննարկումը վարեց Կապանի համայնքապետարանի գյուղատնտեսության և հողօգտագործման բաժնի պետ՝ Ավետիք Համբարձումյանը: Նա ողջունեց ներկաներին, ընթերցեց օրակարգը: Որպես ծանոթություն հիշեցրեց, որ հանրային քննարկման վերաբերյալ կարելի էր ծանոթանալ ՀՀ բնապահպանության նախարարության պաշտոնական կայքում (www.mnp.am), «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի 2020 թվականի փետրվարի 4-ի թիվ 17 համարում, ինչպես նաև Կապանի համայնքապետարանի պաշտոնական կայքի հայտարարությունների բաժնում (www.kapan.am):

Խոսքը փոխանցվեց «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի փորձագետ՝ Զարուհի Զուռնաչյանին:

- Համաձայն ՀՀ գործող օրենսդրության բոլոր հանքավայրերն ենթակա են շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության 2 փուլով՝ 4 հանրային քննարկումների

իրականացմամբ: Այսօր իրականացվում է 4-րդ հանրային քննարկումը, ինչն արդեն նվիրված է եզրակացությանն ու նախագծին:

Ուզում եմ տեղեկացնել, որ արդեն ընկերությանը սահմանված կարգով պետք է տրամադրվի պետական փորձաքննական եզրակացություն: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, եղել են առաջարկություններ և դիտողություններ, որոնցով նախագիծը լրամշակվել է: Փորձաքննական գործընթացին, որպես մասնակից, ներառվել է նաև անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն, որի համաձայն տրամադրվել է տեղեկատվություն, որ «Վիկարտ» ՍՊԸ նախատեսվող տարածքի մի մասը ջրային հող է, ինչի վերաբերյալ գրությամբ տեղեկացվել է ձեռնարկողին, որպեսզի իրականացնեն կոորդինատների ճշգրտում: Հիմնական խնդիրը կապված է ջրային ռեսուրսների հետ: Նշեմ նաև, որ այսօրվա մեր հանրային քննարկումը նվիրված է նրան, թե այդ հանքավայրի շահագործման դեպքում ի՞նչ ազդեցություններ կարող են լինել շրջակա միջավայրի բաղադրիչների վրա՝ հողի, օդի, ջրի: Դուք, որպես համայնքի ներկայացուցիչներ, ի՞նչ խնդիր եք տեսնում, կամ ունեք արդյո՞ք առաջարկություններ, դիտողություններ, և, եթե այսօր ևս հնչեն առաջարկություններ և դիտողություններ, ապա դրանցով ՇՄԱԳ հաշվետվությունը կլրամշակվի և նոր եզրակացության նախագիծը կներկայացվի հաստատման:

Կարծիք (Վլադիմիր Սահակյան)

- Հանքավայրի բացումը առաջին հերթին կապված է քաղաքաշինության հետ: Հանքավայրը կօգտագործվի ավազի համար, որն այսօր ունի մեծ պահանջարկ: Կբացվեն նաև նոր աշխատատեղեր: Վերջին 10 տարիներին կարող ենք ասել, որ Կապանում այսպիսի շինարարություն չի իրականացվել, ինչպես այսօր: Այսօրվա դրությամբ ավազը չի բավարարում և կարծում եմ, որ բնապահպանությանը ոչ մի վնաս չի հասցվի, նույնիսկ կարելի է ասել գետը կմաքրվի: Այդ պատճառով, եթե հնարավոր է տալ թույլտվություն: Այսօր մեր քաղաքում այդ հանքավայրի շահագործումը կարծում եմ անհրաժեշտ է:

Հարց (Ավետիք Համբարձումյան)

- Շրջակա միջավայրին հասցվող նվազագույն վնասների վերաբերյալ ի՞նչ կարող եք ասել:

Պատասխան (Զարուհի Զուռնաչյան)

- Որպես հանքավայր ավազի հանքավայրերը համարվում են իրենց ազդեցություններով ամենանվազ ազդեցություն ունեցող գործունեություն: Այստեղ հիմնական խնդիրը գետի պահպանության խնդիրն է, որպեսզի հունում աշխատանքներ չիրականացվեն, ափերը դեֆորմացիայի չենթարկվեն: Այստեղ փոշու խնդիր չկա՝ կառաջանա միայն տեղափոխման դեպքում, ամառվա շոգ եղանակներին:

Քննարկման ավարտին Ավետիք Համբարձումյանը շնորհակալություն հայտնեց մասնակիցներին մասնակցության համար և քննարկումը հայտարարեց ավարտված:

Կապան համայնքի ղեկավարի **Գևորգ Փարսյան**

Ձեռնարկող՝ «Վիկարտ» ՍՊԸ տնօրեն **Վիգեն Հովհաննիսյան**

Հանրային քննարկման վարող՝
Կապանի համայնքապետարանի
գյուղատնտեսության և հողօգտագործման
բաժնի պետ **Ավետիք Համբարձումյան**

Արձանագրող՝ Կապանի համայնքապետարանի
գյուղատնտեսության և հողօգտագործման
բաժնի առաջատար մասնագետ **Աստղիկ Մկրտչյան**